ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ISBN 978-9939-9240-2-1

9 789939 924021

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ - 2020

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

ԵՐԵՎԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
2020

ՀՏԴ 347(07)
ԳՄԴ 67.410.1g7
Մ 371

Երաշխավորվել է հրապարակության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդի կողմից

Մարկոսյան Տ.Ա. – Իրավ. գիտ. թեկնածու, Արդարադատության ակադեմիայի դասընթացավար, ԵՊՀ ուսանողական իրավաբանական խորհրդատվության կենտրոնի դասախոս-կոորդինատոր, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամ

Մարկոսյան Տիգրան Արթուրի
Մ371 Դատական ծախսերը քաղաքացիական դատավարությունում: Գիտագործնական ձեռնարկ - Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, 64 էջ:

Գրախոսներ՝
Մեղրյան Ս.Գ. - Իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ՀՀ գլխավոր հարկադիր կատարող
Մկրտչյան Ա.Ս. - ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ

Աշխատությունում տեսական աղբյուրների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի դատական ակտերի, ինչպես նաև դատական պրակտիկայի այլ նյութերի հիման վրա վերլուծվել են դատական ծախսերի հասկացության, նշանակության, դատական ծախսերի կազմի, դրանց բաշխման և փոխհատուցման հետ կապված հարցերը, վեր են հանվել քաղաքացիադատավարական օրենսդրության որոշ խնդիրներ և ներկայացվել են այս ինստիտուտի հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Սույն հրատարակությունը կարող է օգտակար լինել դատավորների, փաստաբանների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, ասպիրանտների, ինչպես նաև քաղաքացիական և վարչական դատավարության հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար: Աշխատությունը կարող է ծառայել նաև որպես ուսումնական նյութ:

ՀՏԴ 347 (07)
ԳՄԴ 67.410.1g7

ISBN 978-9939-9240-2-1
© Մարկոսյան Տ.Ա., 2020
© Արդարադատության ակադեմիա., 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

§ 1. Դատական ծախսերի ընդհանուր բնութագիրը 6

§ 2. Պետական տուրքի հասկացությունը և տեսակները ... 9

§ 3. Պետական տուրքի վճարումը և վերադարձը.....16

§ 4. Պետական տուրքի գծով արտոնությունները 27

§ 5. Գործի քննության հետ կապված ծախսերը..... 35

§ 6. Դատական ծախսերի բաշխումը և վերաբաշխումը գործին մասնակցող անձանց միջև 42

§ 7. Դատական ծախսերի փոխհատուցումը գործին մասնակցող անձանց կողմից..... 58

ՆԱԽԱԲԱՆ

Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ամենահուսալի և արդյունավետ միջոցը եղել և շարունակում է մնալ դատական պաշտպանությունը: Դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության բնութագրիչների մեջ իր ուրույն տեղն է գրավում դատական ծախսերի ինստիտուտը: Այն առաջին հերթին կոչված է դատական իշխանությանը զերծ պահել անհիմն հայցերի հարուցումից և դատավարական իրավունքների չարաշահումից՝ ապահովելով դատավարության արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, դատական ծախսերի ինստիտուտի միջոցով օրենսդրական և գործնական մակարդակում երաշխավորվում է անձի դատարանի մատչելիության իրավունքն այն բոլոր դեպքերում, երբ դատական պաշտպանության իրավունքի իրացման համար պետության կողմից սահմանված ֆինանսական սահմանափակումները ի սկզբանե հաղթահարելի չեն անձի համար:

Դատական ծախսերի կարևորությունն ընդգծվում է նաև այն առումով, որ դրանց շնորհիվ տեղի է ունենում դատական պաշտպանության իրավունքի իրացման հետևանքով անձի կրած ծախսերի արդարացի և ողջամիտ հատուցումը: Այսինքն՝ այս ինստիտուտի միջոցով շահագրգիռ անձի համար ապահովվում է բարենպաստ դատական ակտին հասնելու համար կատարված ծախսերի մասով մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումը:

Պատահական չէ, որ, ի տարբերություն նախորդ քաղաքացիադատավարական օրենսդրության, ՀՀ քաղաքացիա-

կան դատավարության նոր օրենսգրքում զգալի տեղ է հատկացվել դատական ծախսերի հետ կապված հարաբերությունների կարգավորմանը: Արդյունքում դատական ծախսերի ինստիտուտը ենթարկվել է էական զարգացման՝ բազմաթիվ հարաբերություններում որդեգրելով նոր մոտեցումներ: Մյուս կողմից, պետք է արձանագրել, որ դատական ծախսերի ինստիտուտին առնչվող մի շարք հարցեր քննարկման առարկա են դարձվել ինչպես Սահմանադրական, այնպես էլ Վճռաբեկ դատարանների կողմից:

Այսպիսով, քաղաքացիադատավարական նոր օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան դատավարագիտական մոտեցումներին համահունչ իմաստավորելու, համակարգային համակողմանի վերլուծության ենթարկելու, առկա խնդիրները վերհանելու և դատական ծախսերի ինստիտուտի հետագա զարգացման մոտեցումներ ձևակերպելու անհրաժեշտությունն արդիականություն են հաղորդում սույն հետազոտությանը:

§ 1. Դատական ծախսերի ընդհանուր բնութագիրը

Արդարադատության իրականացումը ենթադրում է զգալի ֆինանսական ծախսեր, որոնց ապահովման առաջնային բեռը դրված է պետության վրա: Ընդ որում, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի[1] 38-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դատարանների ֆինանսավորումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովվեն նրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերը: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ դատարանների կողմից քննվող գործերի մեծամասնությունը բխում է մասնավոր իրավահարաբերություններից: Այլ կերպ ասած՝ այդ գործերով արդարադատության իրականացման հարցում պետությունից ոչ պակաս շահագրգռվածություն ունեն հենց քաղաքացիական շրջանառության մասնակիցները: Նաև այդ պատճառով է քաղաքացիական դատավարությունում ձևավորված դատական ծախսերի ինստիտուտը հիմնվում շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության «վճարովիության» սկզբունքի վրա[2]:

Դատական ծախսերի ինստիտուտն ունի համալիր բնույթ, քանի որ այն կարգավորվում է ոչ միայն քաղաքացիական դատավարության, այլև ֆինանսական իրավունքի նորմերով[3]:

---

[1] Ընդունվել է 07.02.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ. 143:

[2] Տե՛ս Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации /***под ред. М.А. Викут***. – М. Издательство Юрайт, 2012, էջ 141:

[3] Տե՛ս Гражданский процесс: учебник для бакалавров /***А.А. Власов***. - 4-е изд., перераб. и доп. - М.: Издательство Юрайт, 2012, էջեր 186-187:

Մասնավորապես, ֆինանսական իրավունքի նորմերով կարգավորվում են դատական ծախսերը պետական բյուջե վճարելու կապակցությամբ ծագած հարաբերությունները:

Դատական ծախսերի ինստիտուտն իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնք հանգում են հետևյալին.

1. ***Հատուցողական գործառույթ***, որը դրսևորվում է.

ա. դատարանների պահպանմանն ուղղված պետության կատարած ծախսերի մասնակի հատուցման ձևով.

բ. առանձին քաղաքացիական գործով արդարադատության իրականացման կապակցությամբ պետական միջոցների հաշվին դատարանի կատարած ծախսերի հատուցման ձևով[4]:

2. ***Կանխարգելիչ գործառույթ***, որի միջոցով դատարանը զերծ է մնում անհիմն հայցերի հարուցումից և դատավարական իրավունքների չարաշահումից՝ ապահովելով դատավարության արդյունավետությունը:

3. ***Խթանիչ գործառույթ***, որն արտահայտվում է հնարավոր դրամական նոր պարտավորություններից զերծ մնալու նպատակով պարտավորությունը կամովին կատարելով և գործը դատարան չհասցնելով:

4. ***Պատժողական գործառույթ***, որն իրացվում է մեղավոր անձի վրա դատական ծախսերի հատուցման բեռը դնելով:

---

[4] Քաղաքացիական գործի միավորի ծախսը կազմում է 23 015 ՀՀ դրամ (առավել մանրամասն տե՛ս http://court.am/storage/uploads/files/news/H3MFF9nesC2jVRW2jIloYcSTsBmeas8XuCmzpGs3.pdf հղումով Բարձրագույն դատական խորհրդի կողմից մշակված «Հայաստանի Հանրապետությունում արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգ»-ը, էջեր 61-64):

5. ***Դաստիարակչական գործառույթ***, որը դրսևորվում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների մոտ կարգապահության խթանման ձևով[5]:

Ներկայումս դատական ծախսերի հետ կապված հարաբերությունների կարգավորմանն օրենսդիրը նվիրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի[6] (այսուհետ՝ ՔԴՕ) 10-րդ գլուխը: Պետք է նշել, սակայն, որ դատավարական օրենքը չի տվել դատական ծախսերի սահմանումը՝ փոխարենն ամրագրելով դատական ծախսերի կազմը: Մասնավորապես, ՔԴՕ 101-րդ հոդվածը սահմանել է, որ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով դատավարագիտության մեջ ձևավորված մոտեցումները՝ ***դատական ծախսերը կարելի է բնորոշել որպես գործի հարուցման, քննության և լուծման, ինչպես նաև դատական ակտերի վերանայման առնչությամբ դատարանի, գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կատարած ծախսեր, որոնց փոխհատուցման պարտականությունն օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում դրվում է գործին մասնակցող անձանց վրա:***

---

[5] Պետական տուրքի հատուցողական և կանխարգելիչ գործառույթները ընդգծվել են նաև Սահմանադրական դատարանի 25.05.2010թ. թիվ ՍԴՈ-890 և թիվ ՍԴՈ-1423 որոշումներում:

[6] Ընդունվել է 09.02.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ. 208:

§ 2. Պետական տուրքի հասկացությունը և տեսակները

Դատական ծախսերի շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում պետական տուրքը, որի գանձման օբյեկտների, պետական տուրքի չափի և վճարման կարգի հետ կապված հարցերի կարգավորումը, ՔԴՕ 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վերապահված է «Պետական տուրքի մասին» օրենքին[7] (այսուհետ՝ Օրենք): Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է, իսկ Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքը, ի թիվս այլ դեպքերի, գանձվում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանից փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) ստանալու համար:

Ասվածից հետևում է, որ ***քաղաքացիական դատավարությունում պետական տուրքը դատարանի կողմից շահագրգիռ անձի խնդրանքի հիման վրա արդարադատութ-***

[7] Ընդունվել է 27.12.1997թ.: Ուժի մեջ է մտել 11.01.1998թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.01.11/1:

յան իրականացման կամ օրենքով սահմանված առանձին դատավարական գործողությունների կատարման համար պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է:

Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ սույն օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Այսինքն՝ օրենսդիրը տարբերակում է տուրքի երկու տեսակ.

1. ***Պարզ տուրք***, որը գանձվում է բազային տուրքի՝ 1000 դրամի նկատմամբ սահմանված դրույքաչափով,

2. ***Համամասնական տուրք***, որը գանձվում է հայցագնի նկատմամբ սահմանված տոկոսային դրույքաչափով: Ընդ որում, ՔԴՕ 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցագինը որոշվում է.

1) դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ պահանջվող գումարի չափով.

2) ալիմենտ բռնագանձելու հայցերով՝ մեկ տարվա ընթացքում կատարվելիք վճարումների հաշվարկի չափով, իսկ եթե ալիմենտի բռնագանձման պահանջը ներկայացվել է մեկ տարուց պակաս ժամանակահատվածի համար, ապա այդ ժամանակահատվածում կատարվելիք վճարումների հաշվարկի չափով.

3) ժամկետային, անժամկետ կամ ցմահ վճարումներ կատարելու վերաբերյալ հայցերով՝ մեկ տարվա ընթացքում կատարվելիք վճարումների հաշվարկի չափով, իսկ եթե գումարի բռնագանձման պահանջը ներկայացվել է մեկ տարուց

պակաս ժամանակահատվածի համար, ապա այդ ժամանակահատվածում կատարվելիք վճարումների հաշվարկի չափով.

4) վճարումների չափը պակասեցնելու կամ ավելացնելու վերաբերյալ հայցերով՝ այն գումարից, որով մեկ տարվա հաշվարկով պակասեցվելու կամ ավելացվելու են վճարումները[8]:

Հարկ է նկատի ունենալ, որ մի քանի դրամական պահանջներով հայցադիմում ներկայացվելու դեպքում հայցագինը որոշվում է դրանցից յուրաքանչյուրի համար վերոնշյալ կանոններով որոշված հայցագների հանրագումարի արդյունքում: Ընդ որում, հայցագնի հաշվարկի մեջ չի ներառվում հայցվորի կրած դատական ծախսերը:

Գործնականում հաճախ են ներկայացվում հայցադիմումներ, որոնք ենթադրում են սահմանված տոկոսների կամ տուժանքի հիման վրա պահանջվող գումարի աճ նաև հայցադիմումի ներկայացումից հետո ընդհուպ մինչև պարտավորությունների կատարումը: Այսինքն՝ նման դեպքերում պահանջվող գումարի չափի հիման վրա հայցագինը որոշելն անհնարին է, քանի որ պարզ չէ ինչպես գործի քննության

[8] Դատարանների նախագահների խորհրդի 2013 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից պետական տուրքի գանձման դատական պրակտիկայի մասին» թիվ 129 որոշման 15-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված էր պարբերական վճարումներին առնչվող պահանջներով հայցագնի որոշման ևս մեկ կանոն, որի համաձայն՝ վճարումները կամ հանձնումները դադարեցնելու վերաբերյալ հայցերով հայցագինը որոշվում է մնացած վճարումների և հանձնումների ամբողջ գումարից, սակայն ոչ ավելի, քան մեկ տարվա հաշվարկով: Ակնհայտ է, որ նման կարգավորման անհրաժեշտություն առկա է նաև ՔԴՕ-ում:

տևողությունը, այնպես էլ գործով եզրափակիչ դատական ակտի կատարման օրը: Այս խնդրի լուծման նպատակով ՔԴՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հայցագնի մեջ մտնում են նաև պահանջվող տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների գումարները՝ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ: Ըստ որում, ասվածն ամենևին չի նշանակում, որ հայցվորը պարտավոր է նման տոկոսների կամ տուժանքի բռնագանձման պահանջ ներկայացնել: Այստեղ խոսքն այն մասին է, որ նման տոկոսներ կամ տուժանքի գանձման պահանջ ներկայացված լինելու դեպքում դրանք հայցագնի մեջ ներառվում և, հետևաբար, պետական տուրքի չափի վրա ազդեցություն ունենում են առավելագույնը հայցադիմումի ներկայացման օրվա[9] դրությամբ ունեցած չափով:

Առանձին քննարկման կարիք ունի հայցագնի որոշման խնդիրը հայցագինն արտարժույթով ձևակերպելու պարագայում, քանի որ, կախված այն հանգամանքից, թե օրվա որ ժամին է ներկայացվում հայցադիմումը, Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը կարող է տարբեր լինել: Այս առումով ուշագրավ է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դիրքորոշումը, որի համաձայն. «ՀՀ կենտրոնական բանկը յուրա-

[9] Հայցադիմումը փոստով ներկայացվելու դեպքում դրա ներկայացման օր է դիտարկվում առաքանին փոստային ծառայությանը հանձնելու օրը (տե՛ս, օրինակ, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԼԴ/2323/02/18 քաղաքացիական գործով 06.11.2018թ. որոշումը):

քանչյուր օրվա դրամի միջին փոխարժեքը հրապարակում է տվյալ օրվա ժամը 15:45-ից հետո, ինչը հաստատվում է ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում առկա տեղեկություններով, այն է. «ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում ձևավորված դրամի միջին փոխարժեքը հրապարակվում է ամեն օր, ժամը 15:45-ին՝ հիմք ընդունելով տվյալ օրվա մինչև ժամ 14:30 ՀՀ ԿԲ հաշվետու սուբյեկտների կողմից իրականացված գործառնությունների միջին կշռված փոխարժեքը, որը, որպես կանոն, տարբերվում է առանձին բանկերի կողմից նշվող փոխարժեքներից»: Այսինքն՝ օբյեկտիվորեն անհնար է մինչև համապատասխան օրվա ժամը 15:45 տեղեկանալ ՀՀ ԿԲ սահմանած տվյալ օրվա դրամի միջին փոխարժեքի մասին: Հետևաբար՝ մինչև տվյալ օրվա ժամը 15:45 ՀՀ ԿԲ սահմանած դրամի միջին փոխարժեքը համընկնում է նախորդ օրվա համար սահմանած դրամի փոխարժեքին»[10]: Նման պայմաններում արտարժույթով հայցագինը ձևակերպելու դեպքում դրա դրամական արտահայտությամբ համարժեքը պետք է որոշել հիմք ընդունելով ոչ թե տվյալ օրվա համար, այլ հայցադիմումը ներկայացնելու պահին Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Չնայած քաղաքացիադատավարական նոր օրենսդրութ-

[10] Տե՛ս, օրինակ, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/15383/02/19 քաղաքացիական գործով 23. 07. 2019թ. և թիվ ՏԴ/3226/02/19 քաղաքացիական գործով 06.03.2020թ. որոշումները:

յունը հրաժարվել է «գույքային պահանջ» եզրույթից և դրա փոխարեն օգտագործում է «դրամական պահանջ» հասկացությունը, ինչը մեծամասամբ ենթադրում է հայցի հարուցման պահին հայցագնի չափի որոշակիություն՝ այնուամենայնիվ, չպետք է բացառել որոշ դեպքերում այս հարցում որոշակի դժվարությունների առկայությունը: Այսպես, օրինակ՝ գույքին պատճառված վնասի ստույգ չափը հայցի հարուցման պահին հայցվորը կարող է չիմանանալ, քանի որ դա ենթադրում է համապատասխան փորձաքննության իրականացում: Նույնատիպ իրավիճակ կարող է առաջանալ գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն վերցնելու դեպքում, երբ գրավատուն ունի գրավի առարկայի արժեքի և գրավով ապահովված պարտավորության չափի տարբերությունը պահանջելու իրավունք, իսկ գրավի առարկայի արժեքի շուրջ հայցի հարուցման պահին կողմերի միջև առկա է տարաձայնություն: Այսինքն՝ մի դեպքում հայցագին նշելը կարող է անհնար լինել դրա մասին բավարար տեղեկատվության բացակայության, մեկ այլ դեպքում՝ ոչ վերջնական տեղեկատվության հիման վրա բարձր հայցագին ձևակերպելուց և ըստ այդմ չբավարարված հայցագնի համար պետական տուրքի վճարման ռիսկից ձեռնպահ մնալու պատճառով:

Հենց այս մտահոգությունները փարատելու և դատարանի մատչելիությունը երաշխավորելու համար օրենսդիրը ՔԴՕ 102-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանել է, որ եթե հայցապահանջն իր բնույթով այնպիսին է, որ հայցադիմում

ներկայացնելու պահին անհնար է որոշել հայցագնի չափը, ապա հայցվորը պարտավոր է վճարել օրենքով ոչ դրամական պահանջներով հայցադիմումների ներկայացման համար սահմանված պետական տուրքի չափը: Այս դեպքում դատարանը գործի քննության ընթացքում որոշված հայցագնին համապատասխան դատական ակտով անդրադառնում է լրացուցիչ պետական տուրք գանձելու հարցին:

Դատավարագիտության մեջ առանձնացվում է նաև պետական տուրքի երրորդ տեսակը՝ ***համակցված տուրքը***, որի էությունը դրսևորվում է պարզ և համամասնական տուրքերի համադրման մեջ[11]: Այս առումով ՔԴՕ 102-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ դրամական և ոչ դրամական պահանջներ պարունակող հայցադիմումով պետական տուրքը հաշվարկվում և գանձվում է յուրաքանչյուր պահանջի համար առանձին: Հասկանալի է, որ այս կանոնը կիրառելի է նաև այն դեպքում, երբ հայցադիմումը ներառում է միայն դրամական կամ ոչ դրամական պահանջներ:

---

[11] Տե՛ս Гражданский процесс: учебник для бакалавров /***А.А. Власов***. - 4-е изд., перераб. и доп. - М.: Издательство Юрайт, 2012, էջ 188:

§ 3. Պետական տուրքի վճարումը և վերադարձը

Քաղաքացիական դատավարությունում պետական տուրքի գանձման օբյեկտները և դրույքաչափերը սպառիչ նախատեսված են Օրենքի 9-րդ հոդվածում: Մասնավորապես, դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1. Հայցադիմումների, այդ թվում՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից ներկայացված հայցադիմումների համար՝

ա) դրամական պահանջով՝ հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից.

բ) ոչ դրամական պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով:

2. Իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար՝ բազային տուրքի 500-ապատիկի չափով:

3. Քաղաքացիներին սնանկ ճանաչելու դիմումների համար՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:

4. Հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների համար՝

ա) անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու համար՝ բազային տուրքի չափով.

բ) իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար՝ բազային տուրքի

կրկնապատիկի չափով.

գ) ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումների համար՝ բազային տուրքի չափով.

դ) այլ դիմումների համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով:

5. Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումների համար, արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու կամ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումների համար, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումների համար, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումների համար, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումների համար՝ բազային տուրքի քառապատիկի չափով:

6. Դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝

ա) դրամական պահանջի գործերով՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի երեք տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի երեք տոկոսի

չափով.

բ) ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով.

գ) հատուկ վարույթի գործերով՝ բազային տուրքի ութապատիկի չափով:

7. Դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝

ա) դրամական պահանջի գործերով՝ հայցագնի երեք տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից.

բ) ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի քսանապատիկի չափով.

գ) հատուկ վարույթների գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

8. Դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով:

9. Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկած կատարողական թերթի թղթային պատճենը տրամադրելու համար՝ բազային տուրքի չափով:

10. Գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով:

11. Դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար՝ պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազային տուրքի չափով:

Եթե նույն բողոքով դատական ակտը բողոքարկվում է և՛ սկզբնական հայցի, և՛ հակընդդեմ հայցի մասով, ապա պետական տուրքը գանձվում է դրանցից յուրաքանչյուրի համար վերոնշյալ կանոններով որոշված պետական տուրքերի հանրագումարի չափով:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք չի գանձվում, եթե

1. Դատական ակտը բողոքարկվում է միայն դատական ծախսերի մասով (ՔԴՕ 102-րդ հոդվ., 2-րդ մաս).

2. Բողոքարկվում է միջանկյալ դատական ակտ[12]:

Օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը, եթե սույն օրենքով այլ կարգ սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ: Շարադրվածից և ՔԴՕ ուսումնասիրությունից բխում է, որ քաղաքացիական դատավարությունում պետական տուրքը դրա գծով դատարանի կողմից արտոնություն տրամադրված չլինելու դեպքում պետք է վճարվի մինչև հայցադիմումը, դիմումը, բողոքը դատարան ներկայացնելը կամ գործից նյութեր տրամադրելը,

---

[12] Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/0951/02/15 քաղաքացիական գործով 04.09.2017թ. որոշումը:

իսկ հայցի առարկան փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձվում է հայցի առարկան փոփոխելիս՝ փոփոխված հայցի առարկային համապատասխան: Ընդ որում, եթե որոշ դեպքերում (հայցադիմում, բողոք և այլն) պետական տուրքի վճարման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար օրենսդիրը նախատեսել է որոշակի իրավական հետևանքներ՝ համապատասխան դատավարական փաստաթղթերը վերադարձնելու ձևով (ՔԴՕ 127 հոդվ., 1-ին մաս, 4-րդ կետ, 371-րդ հոդվ., 1-ին մաս, 4-րդ կետ, 395 հոդվ., 1-ին մաս և այլն), ապա մյուս դեպքերում (գործի նյութերից պատճենների տրամադրում, հայցի առարկայի փոփոխում և այլն) այդ հարցը չունի հստակ իրավակարգավորում: Ենթադրվում է, որ առավել ընդունելի է սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու հիմքով համապատասխան դիմումի կամ միջնորդության չքննարկումը և դատարանի կողմից այն ներկայացնողին հասցեագրված պարզաբանումը՝ պետական տուրքի մասով ունեցած պարտականության և այն կատարելու կարգի մասին:

Պետական տուրքի վճարումը հավաստվում է վճարահաշվարկային կազմակերպության կողմից տրամադրված պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակով կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագրով: Ընդ որում, փաստաթղթերը (հայցադիմում, բողոք և այլն) էլեկտրոնային եղանակով ներկայացնելիս պետական տուրքը վճարվում է պետական վճարումների էլեկտրոնային

(www.e-payments.am) համակարգի միջոցով (ՔԴՕ 100-րդ հոդվ., 2-րդ մաս):

Իրավական որոշակիության երաշխավորման տեսանկյունից ողջունելի պետք է համարել դատական պրակտիկայում ձևավորված մոտեցումը, ըստ որի՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և պետական տուրքի գծով արտոնություն կիրառված չլինելու դեպքում դրա գանձման հարցի հետագա քննարկումը դիտարկվում է անթույլատրելի: Այլ կերպ ասած՝ եթե դատարանն առանց պետական տուրքի վճարման անդորրագրի կամ պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին միջնորդության հայցադիմումն ընդունել է վարույթ, ապա դատավարության մյուս փուլերում այդ գործողության կատարման համար պետական տուրքը հայցվորից գանձելու հարցին չի կարող անդրադառնալ[13]:

Պետական տուրքի վերադարձման հիմքերը սահմանված են Օրենքում և ՔԴՕ-ում, որոնց համաձայն՝ պետական տուրքը մասնակի կամ լրիվ ենթակա է վերադարձման.

1) օրենքով սահմանված չափից ավել վճարված լինելու դեպքում.

2) պետական տուրքով գանձվող դատավարական գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում.

3) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձվելու կամ դրանց ընդունումը մերժվելու դեպքում՝ բացառությամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվելու դեպքի.

4) հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե

[13] Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0139/02/13 քաղաքացիական գործով 28.11.2014թ. որոշումը:

հայցվորը չի պահպանել վեճի լուծման արտադատարանական կարգը կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը.

5) գործի վարույթը կարճելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության կամ դատարանի կողմից հաշտարարության համար սահմանված ժամկետում կնքվել է հաշտության համաձայնություն.

6) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում.

7) քաղաքացիական կացության ակտերը կամ նոտարական կարգով վավերացված պայմանագրերը, ժառանգության իրավունքի մասին վկայականները և այլ փաստաթղթերը դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում[14]:

---

[14] Պետական տուրքի վերադարձման հիմքերի ուսումնասիրությունը փաստում է ևս մեկ հիմքի ներդրման անհրաժեշտությունը բոլոր այն դեպքերում, երբ Օրենքի ուժով պետական տուրքից ազատված գործերով պատասխանողը բողոքարկման կապակցությամբ վճարում է պետական տուրք և հայցը մերժվում, իսկ հայցվորը ի սկզբանե պետական տուրքից ազատված լինելու արտոնության ուժով ազատվում է նաև պատասխանողի կողմից վճարված տուրքի գումարը փոխհատուցելու պարտականությունից: Հատկանշական է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համարժեք կարգավորումների առնչությամբ Սահմանադրական դատարանը 10.07.2018թ. թիվ ՍԴՈ-1423 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. ***«Դատաքննության անբարենպաստ ելքով կամ օրենքով նախատեսված կոնկրետ հիմքով պայմանավորված դատավարության մասնակից այն սուբյեկտը, որն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի վճարման արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերն Օրենքով նախատեսված հիմքերով հատուցելու պարտականություն՝ պահպանելով պետական տուրքի գծով արտոնությունը»: Ավելին, նման գործերով դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ որոշվում է պետական տուրքը վերադարձնել այն վճարած և բարենպաստ դատական ակտին հասած կողմին (տե՛ս, օրինակ՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԿԴ1/1293/02/17 քաղաքացիական գործով 12.03.2020թ. որոշումը):***

Բոլոր դեպքերում պետական տուրքը ենթակա չէ վերադարձման, եթե գործի քննության ընթացքում հայցվորը հայցի առարկան այնպես է փոփոխել, որ առաջացել է պետական տուրքի ավել վճարված մաս, իսկ վճռաբեկ բողոքի ընդունումը մերժվելու դեպքում պետական տուրքը չի վերադարձվում ոչ ավել, քան քսան հազար ՀՀ դրամի չափով[15]:

Պետական տուրքի վերադարձման հիմքերի առկայության դեպքում դատարանը կայացվելիք դատական ակտում պարտավոր է նշել դրանց մասին: Այս առումով հստակեցման կարիք ունի այն հարցը, թե որ դատական ակտում և ինչպես պետք է նշվի պետական տուրքի վերադարձման հիմքերը, քանի որ դատական պրակտիկայում առկա է հարցի վերաբերյալ տարատեսակ մոտեցումներ:

Այսպես, մի դեպքում դատարանները պետական տուրքի վերադարձման հիմքերին անդրադառնում են միայն դատական ակտի պատճառաբանական մասում[16], մեկ այլ դեպքում՝ դրանք համապատասխանաբար նշվում են պատճառաբա-

---

[15] Օրենքի այս կարգավորումը մնում է անկատար բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքին կցվում է ոչ թե պետական տուրքը վճարելու անդորրագիրը, այլ պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին միջնորդություն: Հետևաբար, խնդրի լուծման տարբերակ կարող է լինել վճռաբեկ բողոքի ընդունումը մերժվելու դեպքում այդ ակտով բողոք բերող անձից համապատասխան չափով պետական տուրք գանձելու հնարավորության ամրագրումը:

[16] Տե՛ս, օրինակ՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԱՔԴ/0840/02/16 քաղաքացիական գործով 15. 03. 2019թ. որոշումը:

նական և եզրափակիչ մասերում[17], երրորդ դեպքում՝ այդ հարցը լուծվում է առանձին դատական ակտով[18]:

Ենթադրվում է, որ պետական տուրքի վերադարձման հիմքերի քննարկման հետ կապված հարցերը՝ որպես դատական ծախսերի բաշխման գործունեության բաղկացուցիչ մաս, պետք է լուծվեն բացառապես եզրափակիչ ակտերով կամ լրացուցիչ վճռով (որոշմամբ), քանի որ այս ակտերով է օրենսդիրը նախատեսել դատական ծախսերի բաշխման հարցի լուծումը: Ընդ որում, նույն տրամաբանությամբ ասվածը ենթադրում է պետական տուրքի վերադարձման հարցին անդրադարձ ինչպես դատական ակտի պատճառաբանական, այնպես էլ՝ եզրափակիչ մասերում[19]:

Շարադրվածի համատեքստում պետք է նկատի ունենալ, որ դատարանը պետական տուրքի վերադարձման հարցը լուծելիս պետք է բավարար հստակությամբ պատասխան տա ոչ միայն այն հարցին, թե որ հիմքով է պետական տուրքը ենթակա վերադարձման, այլև անհատականացնի վճարված

---

[17] Տե՛ս, օրինակ՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԿԴ2/1243/02/17 քաղաքացիական գործով 22. 12. 2017թ. վճիռը, Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԱՐԱԴ2/0281/02/18 քաղաքացիական գործով 12. 07. 2018թ. «Գործի վարույթը կարճելու մասին» որոշումը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/16275/02/18 քաղաքացիական գործով 17. 10. 2019թ. «Քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը:

[18] Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/31227/02/19 քաղաքացիական գործով 28. 11. 2019թ. «Ավել վճարված պետական տուրքը վերադարձնելու մասին» որոշումը:

[19] Առավել մասնրամասն տես սույն աշխատության 6-րդ պարագրաֆը:

պետական տուրքը (վճարման ամսաթիվ, չափ, վճարման անդորրագրի համար, անհրաժեշտության դեպքում այլ տեղեկություններ) և սահմանի դրա վերադարձման ենթակա չափը:

Հասկանալի է, որ այս պահանջը կիրառելի չի կարող լինել այն դեպքում, երբ պետական տուրք վճարած անձի և դատարանի միջև չի ծագել դատավարական իրավահարաբերություն, այսինքն՝ անձը պետական տուրքի վճարումից հետո սահմանված կարգով չի դիմել դատարան:

Պետական տուրքը վերադարձվում է այն վճարողի կողմից Ֆինանսների նախարարություն ներկայացված դիմումի հիման վրա, որին կցվում է դատարանի կողմից[20] տրված տեղեկանքը՝ պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հանգամանքների հիմնավորման վերաբերյալ[21], ինչպես նաև պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը:

Պետական տուրքը վերադարձվում է դիմումը և պա-

---

[20] Գործնականում նման տեղեկանք տրվում է ինչպես Դատական դեպարտամենտի, այնպես էլ գործը քննած դատավորի կողմից:

[21] Պետական տուրքի վերադարձման հիմքերի մասին դատական ակտ կայացվելու դեպքում նման տեղեկանքի ներկայացման պահանջը համատեղելի չէ ձևական պահանջների չարաշահման արգելքի սկզբունքի էության հետ: Հետևաբար, եթե կարգավորման նպատակը պետական տուրքի վերադարձման հիմքերը ամրագրող դատական ակտից հետո պետական տուրքի և՛ օգտագործման, և՛ վերադարձման դեպքերի բացառումն է, ապա Օրենքում տեղեկանքի գործառույթը ենթակա է վերանայման, կամ պետք է բացառվի պետական տուրքի վճարման փաստաթղթերի բնօրինակների վերադարձը:

հանջվող փաստաթղթերը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում, եթե դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ չի անցել պետական տուրքը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարի:

§ 4. Պետական տուրքի գծով արտոնությունները

ՔԴՕ 102-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Օրենքով[22], որը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ դատարանի հայեցողությամբ և օրենքի ուժով:

Պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման առաջին ընթացակարգի ընդհանրական հիմքը սահմանված է Օրենքի 31-րդ հոդվածում, որը թույլատրում է դատարանների կամ դատավորների կողմից պետական տուրքի գծով արտոնության կիրառումը՝ ելնելով կողմերի գույքային դրությունից: Այս կերպ օրենսդիրը նպատակ է հետանդում վերացնել արդարադատության մատչելիության այնպիսի խոչընդոտները, որոնք պայմանավորված են անձի մոտ համապատասխան միջոցների բացակայությամբ, այսինքն՝ նրա անվ-

[22] Նախկին քաղաքացիադատավարական օենսդրությունը պետական տուրքի գծով արտոնություն էր դիտարկում նաև պետական տուրքի վճարման տարաժամկետումը, որը, սակայն, չուներ Օրենքում համարժեք կարգավորում: Նման իրավիճակը հաղթահարվում էր Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0043/02/12 քաղաքացիական գործով 07. 08. 2013թ. որոշմամբ ձևավորված դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվել է պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդություն, դատարաններն այն պետք է քննարկեն և այդ հարցով որոշում կայացնեն որպես պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն:

ճարունակությամբ[23]:

Գույքային դրության հիմքով արտոնության կիրառման հարցի քննարկման և այդ հարցով համապատասխան որոշում կայացնելու նախադրյալ է բացառապես շահագրգիռ անձի արտոնություն կիրառելու մասին միջնորդությունը: Այսինքն՝ դատարանները չեն կարող պետական տուրքի գծով արտոնության կիրառման հարցը քննարկել և կիրառել սեփական հայեցողությամբ: Ասվածից հետևում է նաև, որ դատարանը կաշկանդված է շահագրգիռ անձի միջնորդության մեջ նշված արտոնության տեսակով և չի կարող քննարկման առարկա դարձնել պետական տուրքի գծով արտոնության այլ տեսակ կիրառելու հարցը[24]:

Միաժամանակ հարկ է նկատել, որ դատարանը պետական տուրքի գծով արտոնությունը կարող է կիրառել, եթե միջնորդություն ներկայացրած անձն ապացուցում է իր անբարենպաստ գույքային դրությունը, որի համար, ի տարբերություն ընդհանուր կանոնի, գործնականում կիրառվում է ապացուցման ավելի մեղմ ստանդարտ՝ բավարար համարելով անուղղակի ապացույցների[25] առկայությունը: Օրինակ՝

---

[23] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով 19. 06. 2001թ, վճիռը, կետեր 60-67:

[24] Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-734(ՎԴ) քաղաքացիական գործով 28.11.2008թ., թիվ ԵԿԴ/2953/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015թ. և թիվ ԱՐԱԴ/1440/02/14 քաղաքացիական գործով 27.01.2016թ. որոշումները:

[25] Անուղղակի ապացույցների մասին առավել մանրամասն տե՛ս ***Մեղրյան Ս.Գ.*** Ապացուցումը և ապացույցները քաղաքացիական դատավարությունում /Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 22-24:

գործազուրկի կարգավիճակ ունենալը Վճռաբեկ դատարանի կողմից, գործում հակառակը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում, գնահատվել է որպես անձի որոշակի սոցիալական աջակցության անհրաժեշտության և, հետևաբար, պետական տուրքի գծով արտոնություն հայցող անձի՝ գույքային ծանր դրության հավանականության վերաբերյալ վկայություն[26]: Մեկ այլ դեպքում՝ նման գնահատական է տրվել անձի կենսաթոշակառու լինելու և հաշմանդամություն ունենալու հանգամանքներին[27]:

Ի տարբերություն դատարանի հայեցողությամբ պետական տուրքի գծով արտոնության կիրառման ընթացակարգի՝ Օրենքը սահմանել է առանձին դեպքեր, երբ անձն ի սկզբանե ազատված է պետական տուրքի վճարման պարտականությունից: Այլ կերպ ասած՝ նման դեպքերում պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ անձին իրավունքը վերապահված է օրենքի ուժով և այն կիրառելի է՝ անկախ շահագրգիռ անձի գույքային դրությունից: Այսպես, Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

1) հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման

---

[26] Առավել մանրամասն տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/3578/02/15 քաղաքացիական գործով 15.01.2018թ. և թիվ ԵԱԴԴ/1262/02/17 քաղաքացիական գործով 08.11.2018թ. որոշումները:

[27] Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0245/02/14 քաղաքացիական գործով 25. 04. 2019թ. որոշումը:

և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

2) հայցվորները՝ ալիմենտի գանձման վերաբերյալ հայցերով.

3) հայցվորները՝ խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

4) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

5) հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

6) հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով.

7) արդարացվածները՝ իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով.

8) արդարացվածները՝ նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում) վերականգնման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք աշխատանք (պաշտոն) ստանալու կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևան-

քով պատճառված վնասի դրամական փոխհատուցման հայցերով.

9) արդարացվածները՝ ազատազրկման, կալանքի կամ ազատության սահմանափակման ձևով պատիժը կրելու, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժերի մեջ հաշվակցելու հայցերով.

10) արդարացվածները՝ նախկինում զբաղեցրած բնակելի տարածքը հետ ստանալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բնակմակերեսով և գտնվելու վայրով համարժեք բնակելի տարածք ստանալու հայցերով.

11) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3 հոդվածով նախատեսված դեպքերում խոշտանգման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով.

12) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով.

13) վճռաբեկ բողոք տվող անձի կողմից դատավարության ընթացքում հանդես եկած դատավարության մասնակիցները և երրորդ անձինք՝ բողոքին միանալու վերաբերյալ հայցերով.

14) դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումներով.

15) փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ իրենց խախտված բնակարանային իրավունքները վերականգնելու վերաբերյալ հայցերով և բողոքներով.

16) հոգեբուժական հաստատությունները՝ քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով.

17) բժշկական կազմակերպությունները՝ քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով.

18) հարկադիր կատարողները՝

- կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի վերանայման վերաբերյալ դիմումներով,

- օրենքով սահմանված դեպքերում պարտապանին անվճարունակ (սնանկ) ճանաչելու վերաբերյալ հայցադիմումներով.

19) ժամանակավոր ադմինիստրացիայի (վարչակազմի) ղեկավարը և լուծարային կառավարիչը՝ «Բանկերի սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց խնդիրներն իրագործելու նպատակով ներկայացվող հայցերով.

20) պարտապանը՝ սեփական անվճարունակությունը (սնանկությունը) ճանաչելու համար ներկայացվող հայցադիմումներով.

21) սնանկության կառավարիչները՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար.

22) դիմողները՝ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով.

23) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր կողմից ներկայացվող հայցերով.

24) հայցվորները՝ պետական նպաստների, այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման, գումարների բռնագանձման վերաբերյալ հայցերով.

25) հայցվորը՝ Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերով.

26) հայցվորները՝ քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցի համար.

27) ոչ առևտրային կազմակերպություններ և ֆիզիկական անձինք՝

- գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով.

- նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ բողոքներով.

- դատարանների վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման վերաբերյալ հայցերով.

- դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով և բաց թողնված ժամկետները վերականգնելու վերաբերյալ դիմումներով.

- տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանների որոշումների դեմ բողոքներով, դատարանների որոշումների դեմ մյուս գանգատներով.

- մշակութային արժեքներն ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

Վերը շարադրված կանոնները կիրառելի են նաև նույն անձանց կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքերում[28]:

Պետք է նկատել, որ ՔԴՕ-ն նախատեսել է ևս մեկ կանոն, երբ անձն ազատվում է պետական տուրքի վճարումից: Այսպես, ՔԴՕ 102-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե հիմնական պահանջից բացի, ներկայացված են ածանցյալ պահանջներ, որոնք հիմնական պահանջի բավարարման դեպքում ենթակա են անվերապահ բավարարման, ապա ածանցյալ պահանջների համար պետական տուրք չի գանձվում:

[28] Տե՛ս, օրինակ՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԴ/1439/02/15 քաղաքացիական գործով 31. 03. 2016թ. և թիվ ԵԿԴ/1750/02/17 քաղաքացիական գործով 21. 02. 2020թ. որոշումները:

§ 5. Գործի քննության հետ կապված ծախսերը

Քաղաքացիական դատավարության իրականացումը, բացի պետական տուրքից, ենթադրում է նաև այլ ծախսերի իրականացում: ՔԴՕ 105-րդ հոդվածով թվարկված են գործի քննության հետ կապված այլ ծախսերը, մասնավորապես, դրանց թվին են դասվում՝

1) փորձաքննության և թարգմանության հետ կապված ծախսերը.

2) վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարվելիք գումարները.

3) գործին մասնակցող անձանց՝ գործի քննության վայր ժամանելու, ինչպես նաև նրանց՝ դատարան ներկայանալու կապակցությամբ ժամանակավոր կացարանով ապահովելու հետ կապված ծախսերը.

4) գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները.

5) ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու հետ կապված ծախսերը[29].

6) գործին մասնակցող անձանց փոստային ծախսերը.

7) դատարանի պահանջները և դատական հանձնարարությունները կատարելու հետ կապված գործին մասնակցող անձանց ծախսերը.

---

[29] Արտագնա դատական նիստ անցկացնելիս դատավորի ծախսերը հատուցելու կարգը և չափը սահմանված են Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1262-Ն որոշմամբ:

8) իրեղեն ապացույցների պահպանման ծախսերը.

9) հաշտարարի վարձատրության գումարը.

10) դատարանի կողմից գործի քննության համար անհրաժեշտ ճանաչված այլ ծախսերը:

Այսպիսով, օրենսդիրը գործի քննության հետ կապված այլ ծախսերը բաժանել է երկու խմբի.

1. ծախսեր, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքում.

2. ծախսեր, որոնք դատարանի գնահատմամբ անհրաժեշտ են եղել գործի քննության համար:

Գործի քննության հետ կապված ծախսերի նման մանրամասն թվարկումը նպատակ է հետապնդում ապահովել իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջները, քանի որ դրանք, մի կողմից, ուղենիշ են այն կատարող անձանց համար, իսկ, մյուս կողմից, կոչված են պաշտպանելու պարտվող կողմին, ում վրա, որպես կանոն, դրվում է ծախսերը հատուցելու պարտականությունը:

Հարկ է հավելել նաև, որ օրենսդիրն առավել մանրամասն կարգավորումներ է նախատեսել վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին, ինչպես նաև փաստաբաններին վճարվելիք գումարների վերաբերյալ: Այսպես, ՔԴՕ 106-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վկային, փորձագետին, մասնագետին և թարգմանչին վճարվում են դատարան ներկայանալու ճանապարհածախսը, օրապահիկը և գիշերավարձը, իսկ բնակության վայրից մինչև 30 կմ հեռավորությամբ այլ վայր մեկնելու կամ, անկախ հե-

ռավորությունից, բնակության վայրից մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքերում հատուցվում է միայն ճանապարհածախսը: Բացի այդ, օրենքը վկայի և մասնագետի ժամանակի կորստի համար նախատեսել է փոխհատուցում: Մասնավորապես, զբաղվածություն չունեցող վկային և մասնագետին վճարվում է փոխհատուցում՝ ժամանակի կորստի համար՝ ելնելով ժամանակի փաստացի կորստի և օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափերից, իսկ աշխատող վկային փոխհատուցումը վճարվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատաժամանակի հաշվարկին համապատասխան:

Վկաներին, փորձագետներին, մասնագետներին և պետական միջոցների հաշվին թարգմանիչներին վճարումը կատարում է Հայաստանի Հանրապետությունը՝ նրանց կողմից իրենց պարտականությունների կատարման ավարտից հետո: Վկաների, փորձագետների և թարգմանիչների պարտականությունների կատարման ավարտի օր է համարվում տվյալ գործով նշանակված վերջին դատաքննության օրը:

Դատարանը վկաների, փորձագետների, մասնագետների և թարգմանիչների կողմից իրենց պարտականությունների կատարման ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում, կայացնում է որոշում՝ վճարում կատարելու անհրաժեշտության մասին և այն ներկայացնում է Դատական դեպարտամենտ, որը վճարումը կատարում է ոչ ուշ, քան համապատասխան որոշումը ստանալուց 20 օր հետո՝ Հայաստանի Հանրապե-

տության պետական բյուջեով Դատական դեպարտամենտին հատկացված միջոցների հաշվին:

Գործի քննության հետ կապված ծախսերի կազմում իր առանձնակի նշանակությունն ունի փաստաբանի վարձատրությունը, որն իրենից ներկայացնում է դատավարության ընթացքում իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի իրացման առնչությամբ փաստաբանին կամ փաստաբանական կազմակերպությանը վճարված կամ վճարման ենթակա գումարը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ «փաստաբանական կազմակերպություն» հասկացությունը չունի լեգալ բնորոշում և դրա բովանդակության բացահայտման առումով անհրաժեշտ է խնդիրը դիտարկել այս դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված մյուս դրույթների լույսի ներքո: Այսպես, «Փաստաբանության մասին» օրենքի[30] 26-րդ հոդվածը սահմանում է, որ փաստաբանն իր գործունեությունը կազմակերպելու համար կարող է ընտրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կազմակերպական-իրավական ցանկացած ձև, իսկ նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «փաստաբան» բառի, դրա բոլոր հոլովաձևերի կամ այդ բառը ներառող բառակապակցությունների օգտագործումը թույլատրվում է միայն փաստաբանների պալատի, փաստաբանական դպրոցի և փաստաբանական գործունեություն իրականացնելու նպատակով փաստաբանի կողմից ստեղծ-

[30] Ընդունվել է 14.12.2004թ.: Ուժի մեջ է մտել 22.01.2005թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2005.01.21/6(378):

վող կազմակերպությունների անվանման մեջ: Ասվածից բխում է, որ փաստաբանական կազմակերպություն է փաստաբանական գործունեություն իրականացնելու նպատակով ստեղծված իրավաբանական անձը, որի կանոնադրական կապիտալում 100 տոկոս մասնակցությունը պատկանում է փաստաբանի կարգավիճակ ունեցող անձին կամ անձանց[31]: Հետևաբար, փաստաբանական կազմակերպության առնչությամբ վճարները փաստաբանի ծախս դիտարկելիս դատարանում պարզաբանման ենթակա է նաև դրա բոլոր մասնակիցների փաստաբանի կարգավիճակ ունենալու հարցը:

Հասկանալի է, որ փաստաբանի վարձատրության ծախս կարող է առաջանալ ինչպես հայցվորի, այնպես էլ գործին մասնակցող այլ անձանց մոտ: Ընդ որում, բոլորովին էական չէ այն հանգամանքը, թե արդյոք համապատասխան գործին մասնակցող անձն ունեցել է իր շահերն ինքնուրույն ներկայացնելու մասնագիտական հնարավորություն կամ ներուժ, թե՝ ոչ: Օրինակ՝ գործերից մեկով հայցվորի իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն լինելու հանգամանքը չի բացառել այդ գործով փաստաբանական կազմակերպության հետ դատական ներկայացուցչության նպատակով իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա վճարված գումարը որպես դատա-

[31] Ուշագրավ է, որ փաստաբանական գրասենյակի բոլոր մասնակիցների փաստաբան լինելու պահանջ նախատեսված է ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի վարքագծի կանոնագրք»-ի 1.4-րդ կետում:

կան ծախս որակումը: Մասնավորապես, թիվ ԵՄԴ/0492/02/14 քաղաքացիական գործով 27.11.2015թ. որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և փաստաբանի խելամիտ վարձատրության համար փոխհատուցում ստանալու իրավունքը չեն կարող գտնվել կախվածության մեջ այնպիսի հանգամանքներից, ինչպիսին են իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն լինելը կամ համապատասխան մասնագետ ունենալը:

Գործի քննության հետ կապված այլ ծախսերի երկրորդը խումբը, ինչպես նշվեց, գտնվում է դատարանի հայեցողության տիրույթում, որի իրացման միակ պայման օրենսդիրը դիտարկել է գործի քննության համար այդ ծախսերի իրականացման անհրաժեշտությունը: Մեկ այլ դրույթով՝ ՔԴՕ 109-րդ հոդվածի 3-րդ մասով օրենսդիրը դատական ծախսի անհրաժեշտ լինելու պահանջը տարածել է բոլոր դատական ծախսերի վրա՝ սահմանելով, որ դատական ծախսերը ենթակա են հատուցման այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Այս առումով հիշատակման է արժանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետևողական դիրքորոշումը, որի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի և ծախքերի փոխհատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, և դրանց չափը եղել է ողջամիտ: Ավելին, դատական ծախսերը փոխհատուցվում են միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերում են ճանաչված

խախտմանը[32]: Ընդ որում, ծախսի անհրաժեշտ լինելը նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է ապացուցի, որ այդ հատուցումն իրոք անհրաժեշտ է իր խախտված իրավունքները վերականգնելու համար և, որ ամենակարևորն է, պետք է ցույց տա իր կրած վնասների ու իր իրավունքների խախտման միջև պատճառահետևանքային կապը[33]:

Այսպիսով, ծախսը, ըստ էության, կարող է գործի քննության համար անհրաժեշտ ճանաչվել այն դեպքում, երբ ծախսի կատարման և գործին մասնակցող անձի պատշաճ դատավարական գործունեության միջև առկա է ուղղակի պատճառահետևանքային կապ: Այլ կերպ ասած՝ առանց այդ ծախսի կատարման անհնար կլիներ քաղաքացիական գործով գործին մասնակցող անձի հետապնդած նպատակի իրականացումը:

---

[32] Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Սահինն ընդդեմ Գերմանիայի գործով 08.07.2003թ. վճիռը, կետ 105, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 02.10.2012թ. վճիռը, կետ 234, Արզումանյանն ընդդեմ Հայաստանի գործով 11.01.2018թ. վճիռ, կետ 44:

[33] Տե՛ս Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3025/02/11 քաղաքացիական գործով 27.11.2015թ և թիվ ԵԿԴ/3296/02/14 քաղաքացիական գործով 27.10.2017թ. որոշումները:

§ 6. Դատական ծախսերի բաշխումը և վերաբաշխումը գործին մասնակցող անձանց միջև

Դատական պաշտպանությունը չի կարող արդյունավետ համարվել այն դեպքում, երբ ապահովված չէ բարենպաստ դատական ակտին հասնելու համար անձի կատարած ծախսերի ողջամիտ չափով վերականգնման հնարավորությունը: Այդ պատճառով օրենսդրական և գործնական մակարդակում պետք է երաշխավորել, որ դատարան դիմած և դատական պաշտանություն ստացած անձը չհայտնվի ավելի անշահեկան վիճակում, քան այն, որում նա գտնվում էր մինչև դատարան դիմելը: Մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու հարցում պակաս կարևոր չէ դատական ծախսերի պատշաճ բաշխումը, ինչը ընդգծվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսանկյունից որոշ դեպքերում դատական ծախսերի բաշխման հետ կապված հարցերը կարող են նշանակություն ունենալ վարույթի արդար դատաքննության իրավունքի պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար[34]:

Դատական ծախսերի բաշխումը կենտրոնական տեղ է զբաղեցնում դատական ծախսերի ինստիտուտի շրջանակում և կոչված է եզրափակել այս առումով դատարանի գործու-

[34] Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Ստանկիևիչը ընդդեմ Լեհաստանի գործով 06. 04. 2006թ. վճիռը, կետ 60:

նեությունը: Ուշագրավ է, որ այն զուգակցվում է ընդհանրապես դատական վարույթի եզրափակման հետ և ածանցվում է դատական գործի արդյունքներից: Չնայած օրենսդիրը չի բացահայտել դատական ծախսերի բաշխման քաղաքացիադատավարական բովանդակությունը՝ դատական ծախսերի ինստիտուտի գործառույթների և առկա կարգավորումների համակարգային վերլուծությունից կարելի է բխեցնել, որ դատական ծախսերի բաշխմանն ուղղված դատարանի գործունեությունը ներառում է հետևյալ փոխկապակցված գործողությունների ամբողջությունը՝

1. դատական ծախսերի շրջանակի պարզում.
2. յուրաքանչյուր դատական ծախսի անհրաժեշտ լինելու և չափի որոշում.
3. դատական ծախսերի բաշխման կանոնի ընտրություն և կիրառում.
4. դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից ազատելու հիմքերի պարզում և լուծում.
5. դատական ծախսերի հաշվանցի հիմքերի պարզում և լուծում.
6. պետական տուրքի վերադարձման հիմքերի պարզում և ամրագրում.
7. դատական ծախսերի կամ դրանց մասի բաշխման հարցը լուծված լինելու կամ դատական ծախսերի փոխհատուցման պարտականության ամրագրում:

Դատական ծախսերի շրջանակի պարզումը ենթադրում է դատարանի կողմից դատական ծախսերի մասին գոր-

ծում առկա տվյալների համադրումը օրենքով նախատեսված դատական ծախսերի տեսակների հետ, դրանց համապատասխանության հաստատումը և հաշվառումը: Ընդ որում, դատական ծախսերի շրջանակի մեջ օրենսդիրը թույլատրում է ներառել բացառապես գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

Գաղտնիք չէ, որ քաղաքացիական դատավարությունում մի շարք ծախսեր օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով առաջանում են վարույթի ավարտից հետո (օրինակ՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին դատական ակտ կայացվելու կամ բարենպաստ դատական ակտ կայացվելու դեպքում փաստաբանի վարձատրություն նախատեսող պայմանագիր կնքելու դեպքում): Բացի այդ, որոշ ծախսերի առկայությունը ենթադրվում է օրենսդրական կարգավորումների ուժով, օրինակ՝ քաղաքացիական գործով հանրային պաշտպանի միջոցով անձի ներկայացվելու դեպքում: Հետևաբար, «գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախս» արտահայտությունը ներառում է ոչ միայն կատարված կամ կատարման ենթակա ծախսերի մասին ուղղակիորեն հավաստող փաստաթղթերը, այլև նրանք, որոնք օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բավարար հավաստիությամբ վկայում են նման ծախսերի առկայությունը: Այլ կերպ ասած՝ ծախսերը բոլոր դեպքերում պետք է լինեն իրական:

Հարկ է նկատել, որ անձի ծախսերը դատարանի կողմից դատական ծախսերի կազմի մեջ ներառելու համար նա

պետք է նման պահանջ ներկայացնի դատարանին: Դատական ծախսերի հետ կապված պահանջի ներկայացումը, ի տարբերություն քաղաքացիական դատավարությունում պահանջի ներկայացման ընդհանուր կանոնի, չի պահանջում հայցի առարկայի մեջ այդ մասին հիշատակում կամ առանձին միջնորդության ներկայացում, քանի որ օրենսդիրը ՔԴՕ մի շարք դրույթներում իմպերատիվ սահմանել է դատական ծախսերի բաշխման հարցի լուծման պահանջ: Նման պայմաններում դատական ծախսի հետ կապված պահանջի ներկայացում պետք է դիտարկել նաև այն դեպքերը, երբ գործին մասնակցող անձը դատարան է ներկայացնում դատական ծախսերի վերաբերյալ ապացույցներ:

Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ դատական ծախսերի հետ կապված պահանջների ներկայացումը օրենսդիրը թույլատրում է բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ անընդունելի համարելով դատական ծախսերի բռնագանձման համար առանձին քաղաքացիական գործերի գոյությունը (ՔԴՕ 108 հոդվ., 1-ին մաս)[35]:

Չնայած ՔԴՕ-ն առանձին կարգավորման է ենթարկել դատական ծախսերի հետ կապված միայն դատավարության մասնակիցների կողմից պահանջի ներկայացման հարաբերությունները՝ դատական ծախսերը հիմնավորող փաստաթղթեր կարող են կազմավորվել հենց դատարանի կողմից (օրինակ՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին դա-

[35] Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/1401/02/11 քաղաքացիական գործով 29.06.2012թ. որոշումը:

տական ակտը) կամ առանձին դատավարական գործողությունների (ապացույցները դրանց գտնվելու վայրում զննում և այլն) արդյունքում:

Դատական ծախսերի շրջանակը պարզելուց հետո դատարանը ձեռնամուխ է լինում այդ շրջանակում ներառված յուրաքանչյուր դատական ծախսի անհրաժեշտ լինելու[36] և չափի որոշմանը:

Քաղաքացիադատավարական օրենսդրությունը նախատեսում է չորս խումբ ծախսեր, որոնց չափի որոշման հարցում դատարանը ունի հայեցողության տարբեր աստիճաններ: *Այսպես՝*

1. ծախսեր, որոնց չափը նախատեսված է օրենքով.
2. ծախսեր, որոնց առավելագույն չափն է որոշված օրենսդրությամբ.
3. ծախսեր, որոնց չափը որոշվում է կողմերի համաձայնությամբ.
4. ծախսեր, որոնց չափը որոշվում է դատարանի հայեցողությամբ.

Հասկանալի է, որ օրենքով և կողմերի համաձայնությամբ որոշված ծախսերի չափը (համապատասխանաբար պետական տուրքը և հաշտարարի վարձատրության գումարը) որոշելու հարցում դատարանը չունի հայեցողություն, իսկ օրենսդրությամբ առավելագույն չափի ամրագրմամբ դատական ծախսերի դեպքում դատարանը հիմք է ընդունում

[36] Դատական ծախսի անհրաժեշտության գնահատման չափանիշները վերլուծվել են նախորդ պարագրաֆի շրջանակում և հավասարապես կիրառելի են այստեղ:

դրանց փաստացի չափը, սակայն ոչ ավել, քան որոշված է համապատասխան նորմատիվ իրավական ակտով[37]:

Հատկապես քննարկման կարիք ունեն չորրորդ խումբ դատական ծախսերի չափի որոշման հետ կապված հարցերը, որտեղ կենտրոնական տեղը պատկանում է փաստաբանի խելամիտ վարձատրությանը: Իհարկե, անձինք ազատ են կնքելու իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր իրենց նախընտրած փաստաբանի կամ փաստաբանական կազմակերպության հետ՝ ցանկացած վարձատրության չափով: Այդ պատճառով օրենսդիրը դատական ծախս է դիտարկել ոչ թե փաստաբանի ցանկացած, այլ միայն խելամիտ վարձատրությունը:

«Խելամտությունը» ինքնին գնահատողական հասկացություն է և գտնվում է դատարանի հայեցողության տիրույթում: Այնուամենայնիվ, օրենսդիրը սահմանել է այս հայեցողության իրացման որոշակի պայմաններ: Մասնավորապես, ՔԴՕ 107-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փաստաբանի վարձատրության փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին

[37] Օրինակ՝ վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին օրապահիկի, գիշերավարձի և ճանապարհածախսի վճարումները չեն կարող գերազանցել Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված չափերը:

գնացուցակից[38], ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից: Ընդ որում, փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը ներառում է ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը, իսկ գործի բարդությունը գնահատելիս պետք է հաշվի առնել վիճելի իրավահարաբերության բնույթը և գործի քննության տևողությունը[39]: Բացի ողջամիտ լինելուց՝ փաստաբանի վարձատրությունը պետք է լինի իրական և անհրաժեշտ[40]: Միաժամանակ ներկայացուցչի վճարի փոխհատուցման չափի հարցը որոշելիս կարևոր է նաև այն հարցի պատասխանը, թե փոխհատուցման ինչ չափը կարող է վերականգնել մինչև դատարան դիմելն առկա դրությունը[41]:

Հարկ է նշել, որ փաստաբանի վարձատրության ողջամիտ չափի որոշման պայմանները հավասարապես կիրառելի

---

[38] Տե՛ս ՀՀ փաստաբանների պալատի 26.12.2013թ. «Դատարանների կողմից դատական ծախսերի հատուցման հետ կապված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը հաստատելու մասին» թիվ 33/3-Լ որոշումը:

[39] Առավել մանրամասն տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով 29.06.2012թ. որոշումը:

[40] Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3025/02/11 քաղաքացիական գործով 27.11.2015թ. որոշմամբ այս չափանիշները կիրառելի է համարել նաև վարչական և քրեական դատավարություններում փոխհատուցման ենթակա փաստաբանի վարձատրության գումարի նկատմամբ:

[41] Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1451/05/15 վարչական գործով 30.11.2018թ. որոշումը:

են նաև հանրային պաշտպանի կողմից իրականացված դատական ներկայացուցչության արդյունքում պետական բյուջեի օգտին գանձման ենթակա գումարի չափը որոշելիս:

Դատական ծախսերը բաշխելիս դատարանի կողմից լուծման ենթակա հաջորդ հարցն այն է, թե գործին մասնակցող անձանցից ով և ինչ ծավալով է կրելու դատական ծախսեր կատարելու կամ փոխհատուցելու պարտականությունը:

Այս խնդիրը ենթակա է լուծման դատական ծախսերի բաշխման կանոնների միջոցով, որոնք հանգում են հետևյալին.

1. բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն դատական ծախսերը կրում է պատասխանողը.

2. իր գործողությունների հետևանքով առաջացած դատական ծախսերը կրում է պարտված կողմի կողմում հանդես եկող վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը.

3. ոչ պատշաճ պատասխանողի կատարած դատական ծախսերը, անկախ գործի ելքից, կրում է հայցվորը.

4. դատական ծախսերը, անկախ գործի ելքից, կրում է դատարանի կողմից անհարգելի ճանաչված պատճառներով հաշտարարությանը մասնակցելուց հրաժարված անձը[42].

---

[42] ՔԴՕ 187-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է այս հիմքով դատական ծախսերը փոխհատուցելու պարտականությունը ինչպես լրիվ, այնպես էլ մասնակի հաշտարարությունից հրաժարված անձի վրա դնելու հնարավորություն՝ առանց հստակեցնելու դրա իրացման պայմանները: Նման պայմաններում անհրաժեշտ է կա՛մ որոշակիացնել հաշտարարությունից հրաժարված անձի վրա ծախսերը լրիվ կամ մասնակի դնելու պայմանները, կա՛մ օրենքից հանել մասնակի բաշխման մասով կարգավորումը:

5. հայցապահանջի կամովին կատարման հետևանքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերը կրում է պատասխանողը[43].

6. հաշտության համաձայնության հաստատման հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերը կողմերը կրում են հավասարաչափ.

7. գործի վարույթը այլ հիմքերով կարճելու դեպքում դատական ծախսերը կրում է հայցվորը.

8. հայցն առանց քննության թողնելու դեպքում դատական ծախսերը կրում է հայցվորը.

9. դատական ակտի դեմ ներկայացված բողոքը հետ վերցնելու դեպքում դատական ակտի բողոքարկման կապակցությամբ առաջացած դատական ծախսերը կրում է բողոք ներկայացրած անձը:

Դժվար չէ նկատել, որ դատական ծախսերի բաշխման կանոնների հիմքում, բացառությամբ բողոքը հետ վերցնելու դեպքի, դրված է մեղավոր անձի վրա պատասխանատվությունը դնելու սկզբունքը, որի համաձայն՝ դատական ծախսերը կատարելու կամ դրանք փոխհատուցելու պարտականությունը պետք է կրի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորած անձը: Այլ կերպ ասած՝ դատական ծախսերի բաշխումն ուղղակիորեն առնչվում է հայց հարուցելու իրավունքի առկայության, այն իրականացնելու կարգի պահպանման, հայցի հիմ-

[43] Հայցապահանջի կամովին կատարման վերլուծությանը Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձել է թիվ ԵԱՔԴ/2612/02/17 քաղաքացիական գործով 22.02.2019թ. որոշմամբ:

նավորվածության կամ առանձին դատավարական գործողության արդյունավետության կամ իրավաչափության հետ:

Տնօրինչականության սկզբունքն իր դրսևորումն է ստացել նաև դատական ծախսերի բաշխման գործընթացում: Մասնավորապես, ՔԴՕ 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարան հայցադիմում ներկայացնելուց հետո գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին գրավոր համաձայնություն կայացվելու դեպքում դատարանը դատական ծախսերը բաշխում է դրան համապատասխան: Այս կերպ օրենսդիրը թույլատրել է սահմանափակել դատական ծախսերի բաշխման օրենքով սահմանված կանոնների կիրառությունը, եթե.

1. առկա է գրավոր, այդ թվում՝ հաշտության համաձայնության տեսքով, կնքված դատական ծախսերի բաշխման մասին համաձայնություն.

2. դատական ծախսերի բաշխման մասին համաձայնությունը կնքվել է հայցի հարուցումից հետո.

3. դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության կնքմանը մասնակցել են բոլոր շահագրգիռ գործին մասնակցող անձինք, այսինքն՝ այն անձինք, ովքեր դատական ծախսերի բաշխման կանոնների համաձայն, ունեն դատական ծախսերի փոխհատուցում ստանալու իրավունք և փոխհատուցում վճարելու պարտականություն.

4. դատական ծախսերի բաշխման մասին համաձայնությունը վերաբերում է միայն գործի մասնակցող անձանց օգտին փոխհատուցման ենթակա դատական ծախսերին:

Միևնույն ժամանակ չեն բացառվում իրավիճակները, երբ գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնությունը վերաբերի միայն առանձին դատական ծախսերին կամ առնչվի նաև դատարանի կրած դատական ծախսերի տնօրինմանը: Նման դեպքերում ենթադրվում է, որ համաձայնությամբ չտնօրինված, ինչպես նաև գործին մասնակցող անձանց կողմից տնօրինման ոչ ենթակա դատական ծախսերի բաշխումը պետք է իրականացվի դրանց բաշխման օրենքով սահմանված կանոններին համահունչ:

Որպես ընդհանուր կանոն, դատական ծախսերն ամբողջ ծավալով դրվում են դրանց փոխհատուցման համար պատասխանատու անձի վրա: Բացի այդ, օրենսդիրը դրանց բաշխման առանձին իրավիճակների համար նախատեսել է հետևյալ լուծումները.

1. դատակցության դեպքում դատակիցները կրում են իրենց գործողություններով առաջացած դատական ծախսերի փոխհատուցման մասնաբաժինը, իսկ դրա որոշման անհնարինության դեպքում՝ հավասարաչափ.

2. դատակցության դեպքում դատակիցները կրում են դատական ծախսերի փոխհատուցման համապարտ պարտականություն, եթե վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն[44].

---

[44] Թեև ՔԴՕ 109-րդ հոդվածի 4-րդ մասը խոսում է միայն պատասխանողների համապարտ պատասխանատվության մասին՝ ակնհայտ է, որ համապարտություն ենթադրող իրավահարաբերություններով հայցերի մերժման դեպքում հայցվորները ևս պետք է կրեն համապարտ պարտականություն:

3. վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը կարող է կրել միայն իր գործողությունների հետևանքով առաջացած դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը.

4. բողոք ներկայացրած անձը բողոքը հետ վերցնելու դեպքում կրում է միայն բողոքի ներկայացման հետևանքով առաջացած դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը:

Դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից ազատելու հնարավորությունը ՔԴՕ նորամուծություններից է: Եթե պետական տուրքի գծով արտոնության կիրառումը թույլ է տալիս վերացնել ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված դատարան մուտքի խոչընդոտները, ապա դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից ազատումը նախադրյալ է դատական վարույթի ավարտից հետո ծագելիք ֆինանսական բեռի ռիսկերը չեզոքացնելու և դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացնելու համար: Ավելորդ չէ հիշատակել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն առ այն, որ դատական այն ծախսերը, որոնց վճարման պարտականությունն անձը կրում է ոչ թե դատարան դիմելիս, այլ դատական քննության ավարտից հետո, գործնականում նույնպես կարող են դիտարկվել որպես «դատարանի իրավունքի» սահմանափակում[45]:

---

[45] Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Ստանկովը ընդդեմ Բուլգարիայի գործով 12.07.2007թ. վճիռը, կետ 54:

ՔԴՕ 113-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից ազատելու հիմքը և ծախսերի շրջանակը, որոնց փոխհատուցման պարտականությունից թույլատրվում է ազատել: Այսպես, դատարանը, հաշվի առնելով գործին մասնակցող անձի գույքային դրությունը, կարող է եզրափակիչ դատական ակտով նրան ազատել Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների և դատարանի կրած դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից:

Դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից ազատելու հարցը դատարանը կարող է քննարկել ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ շահագրգիռ անձի միջնորդությամբ: Ընդ որում, պետական տուրքի գծով արտոնության կիրառման նմանությամբ անձի գույքային դրության ապացուցման մասով կիրառելի է ապացուցման ավելի մեղմ ստանդարտ՝ բավարար համարելով նաև անուղղակի ապացույցների առկայությունը: Այս առումով յուրաքանչյուր դեպքում լրացուցիչ ուշադրության պետք է արժանանա պետական տուրքի գծով արտոնության կիրառման փաստը, քանի որ այն, գործում հակառակի մասին ապացույցների բացակայության դեպքում, արդեն իսկ վկայում է անձի ոչ բարենպաստ գույքային դրություն ունենալու փաստը դատարանի կողմից հաստատված համարելու հանգամանքը:

Օրենսդրությունը դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից պետք է ազատեր նաև օրենքի ուժով

պետական տուրքի վճարումից ազատված հայցվորներին, քանի որ պետական տուրքի գծով արտոնության սահմանումը ինքնին ենթադրում է այդ գործերով պաշտպանվող շահերի պաշտպանությունը պետության հաշվին երաշխավորելու անհրաժեշտությունը:

Դատական ծախսերի հաշվանցման անհրաժեշտություն կարող է առաջանալ, երբ գործին մասնակցող երկու անձի մոտ առկա են դատական ծախսերի փոխհատուցման հանդիպական պարտականություններ: Նման իրավիճակ հնարավոր է առաջին հերթին հայցը մասնակի բավարարվելու դեպքում, երբ բավարարված հայցապահանջներին համամասնորեն կողմերի մոտ առաջանում է դատական ծախսերի փոխհատուցման հանդիպական պարտականություն: Այսպես, օրինակ՝ 1 000 000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջի գործով դատարանը հայցը բավարարում է մասնակի՝ 400 000 ՀՀ դրամի չափով: Նույն գործով հայցվորը կրել է ծախս 20 000 ՀՀ դրամի չափով՝ պետական տուրքի ձևով, իսկ պատասխանողը 100 000 ՀՀ դրամի չափով ծախս՝ փաստաբանի խելամիտ վարձատրության ձևով: Արդյունքում հայցվորի փոխհատուցման ենթակա պետական տուրքի գումարը կկազմի 8000 ՀՀ դրամ, իսկ պատասխանողի փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը կկազմի 40 000 ՀՀ դրամ: Հաշվանցի արդյունքում միայն հայցվորը կունենա պատասխանողի կրած ծախսը մասնակի՝ 32 000 ՀՀ դրամի չափով փոխհատուցելու պարտականություն:

Չնայած ՔԴՕ-ն դատական ծախսերի փոխհատուցման պարտականության հաշվանցը նախատեսել է միայն հայցի մասնակի բավարարման դեպքի համար՝ ակնհայտ է, որ այդպիսի անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև գործով հակընդդեմ հայց հարուցվելու դեպքում[46]:

Դատական ծախսերի բաշխման գործընթացը ամփոփվում է դատական ծախսերի կամ դրանց մասի բաշխման հարցը լուծված լինելու կամ դատական ծախսերի փոխհատուցման պարտականության ամրագրմամբ: Դատական ծախսերի կամ դրանց մասի բաշխման հարցը լուծված լինելու մասին եզրահանգումը կարող է բխել ինչպես դատական ծախսերի վճարված լինելու (օրինակ՝ պետական տուրքը), այնպես էլ դատական ծախսերի փոխհատուցման պարտականության որևէ հիմքով դադարման (փոխհատուցման պարտականությունից ազատում, հաշվանց) դեպքում: Հետևաբար, նման հիմքերի բացակայության դեպքում դատարանը պետք է ամրագրի դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը, մասնավորապես՝ ով, ում և որպես ինչ պետք է վճարի: Այսպես՝ կախված նրանից, թե վարույթն ավարտվում է առանց գործն ըստ էության լուծելու, թե դրա ըստ էության լուծմամբ՝ դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը համապատասխանաբար սահմանվում է հայցն առանց քննության թողնելու (ՔԴՕ 181-րդ հոդվ., 1-ին մաս), գործի վարութը կարճելու (ՔԴՕ 183-րդ

[46] Պետական տուրքի վերադարձման հետ կապված հարցերը քննարկվել են սույն աշխատության 3-րդ պարագրաֆում:

հոդվ., 3-րդ մաս, ՔԴՕ 373-րդ հոդվ., 4-րդ մաս և ՔԴՕ 399-րդ հոդվ., 7-րդ մաս) որոշմամբ, վճռով (ՔԴՕ 192-րդ հոդվ., 4-րդ մաս, 7-րդ կետ) կամ վերադաս դատական ատյանների որոշմամբ (ՔԴՕ 381-րդ հոդվ., 6-րդ մաս, 3-րդ կետ և ՔԴՕ 406-րդ հոդվ., 5-րդ մաս, 10-րդ կետ), իսկ դա չանելու կամ թերի անելու դեպքում դատարանն այդ հարցը կարող է շտկել լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու միջոցով:

ՔԴՕ-ն դատական ծախսերի բաշխմանը զուգահեռ նախատեսել է նաև դատական ծախսերի վերաբաշխման գործիքակազմը, որը կարելի է բնորոշել որպես վերադաս դատական ատյանի կողմից դատական ակտը բեկանելու և փոփոխելու արդյունքում գործի նոր ելքին համապատասխան գործի բոլոր, ներառյալ բեկանված դատական ակտը կայացրած դատարանում կատարված դատական ծախսերի բաշխում: Ի տարբերություն վերաբաշխման՝ ներկայացված բողոքը մերժվելու, ինչպես նաև բավարարվելու, սակայն դատական ակտը չփոփոխվելու կամ գործը նոր քննության չուղարկվելու դեպքում վերադաս դատական ատյանն իրականացնում է միայն բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված ծախսերի բաշխում[47]:

---

[47] Ուշադրության է արժանի վերաքննիչ և վճռաբեկ բողոքների պատասխանների ներկայացման կապակցությամբ գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի բաշխման հարցը, քանի որ շատ դեպքերում նման բողոքները վարույթ չեն ընդունվում, իսկ օրենքը թույլ է տալիս բողոքի պատասխան ներկայացնել նաև մինչև բողոքի վարույթ ընդունումը: Այս իրավիճակի հանգուցալուծման դրսևորում կարող է լինել բողոքի ընդունելիության հարցի վերաբերյալ որոշմամբ դատական ծախսերին անդրադառնալու հնարավորության ամրագրումը:

§ 7. Դատական ծախսերի փոխհատուցումը գործին մասնակցող անձանց կողմից

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ներառյալ դատական ծախսերի փոխհատուցման վերաբերյալ դրանց դրույթները պարտադիր են հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Հարկ է նկատել, որ, կախված այն հանգամանքից, թե ում պետք է փոխհատուցվի դատական ծախսը, օրենսդիրը ցուցաբերել է տարբերակված մոտեցում: Մասնավորապես, գործին մասնակցող անձն իր օգտին որպես դատական ծախսի փոխհատուցում վճարման ենթակա գումարի հարկադիր կարգով գանձում պահանջելու իրավունք ունի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից: Ասվածը, իհարկե, չի բացառում մինչև կատարողական թերթը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելը դրա կամովին կատարում նախաձեռնելու հնարավորությունը: Ընդ որում, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով[48] նախատեսված ընթացակարգը ևս խթանում է դատական ակտի կամովին կատարումը՝ ընդհանրապես, և դատական ծախսերի փոխհատուցումը՝ մասնավորապես:

Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման

---

[48] Ընդունվել է 05.05.1998թ.: Ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.06.15/12(45):

մասին» օրենքի 18-րդ հոդվածը պարտավորեցնում է պահանջատիրոջը կատարողական թերթ տալու դիմումին կցել այդ դիմումի օրինակը պարտապանին ուղարկելու ապացույց, իսկ դատարանը կարող է կատարողական թերթ տալու հարցը լուծել դիմումն ստանալու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում: Գործում դատական ակտը կատարված լինելու մասին ապացույցի առկայության դեպքում կատարողական թերթ տալու մասին դիմումը ենթակա է մերժման: Հետևաբար, հնարավոր խնդիրներից խուսափելու առումով դատական ծախսերի փոխհատուցման պարտականություն ունեցող գործին մասնակցող անձինք փոխհատուցումը տրամադրելուց հետո այդ մասին ապացույցները կարող են ներկայացնել դատարան:

Շարադրվածի համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունից՝ որպես գործին մասնակցող անձից դատական ծախսի փոխհատուցման գումարի բռնագանձումը շատ դեպքերում իրականացվում է Կառավարության կողմից սահմանված կարգով[49]՝ փոխանցելի մուրհակների տրամադրմամբ:

Ի տարբերություն գործին մասնակցող անձանց օգտին դատական ծախսերի փոխհատուցման տրամադրման կարգի՝ Հայաստանի Հանրապետության օգտին դատական ծախսի փոխհատուցում նախատեսող դատական ակտերի հարկադիր կատարման ներկայացման գործընթացն ունի ո-

[49] Ընդունվել է 07.08.2000թ.: Ուժի մեջ է մտել 08.09.2000թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2000.08.29/20(118):

որոշակի առանձնահատկություններ, որոնք հանգում են հետևյալին

1. Հայաստանի Հանրապետության օգտին պետական տուրքի և այլ դատական ծախսերի փոխհատուցման գումարների բռնագանձման վերաբերյալ կատարողական թերթը դատարանը տրամադրում է առանց պահանջատիրոջ դիմումի.

2. պետական տուրքը բռնագանձելու վերաբերյալ կատարողական թերթն ուղարկվում է հարկադիր կատարման՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում, եթե մինչև ուղարկելու պահը գործում առկա չեն պետական տուրքի վճարման փաստի վերաբերյալ տեղեկություններ.

3. Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների ու դատարանի կրած դատական ծախսերը բռնագանձելու վերաբերյալ կատարողական թերթն ուղարկվում է հարկադիր կատարման՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող երկրորդ ամսվա ընթացքում, եթե մինչև ուղարկելու պահը գործում առկա չեն այդ ծախսերի վճարման փաստի վերաբերյալ տեղեկություններ.

4. հարուցված կատարողական վարույթներով Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորությամբ օժտված է Պետական եկամուտների կոմիտեն:

Վկայակոչված դրույթներից բխում է, որ Հայաստանի

Հանրապետության օգտին բռնագանձման ենթակա դատական ծախսերի դեպքում պարտավոր անձին տրված է դատական ծախսերի փոխհատուցումը կամովին տրամադրելու ավելի լայն հնարավորություն՝ դրանով իսկ նրան ապահովագրելով հարկադիր կատարման համար առաջացող լրացուցիչ գումարների վճարումից: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես գործին մասնակցող անձի օգտին փոխատուցման ենթակա դատական ծախսի գումարները գանձվում են ոչ թե այս, այլ գործին մասնակցող բոլոր անձանց համար սահմանված ընդհանուր կարգով:

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

ТИГРАН МАРКОСЯН

СУДЕБНЫЕ РАСХОДЫ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

(НАУЧНО-ПРАКТИЧЕСКОЕ ПОСОБИЕ)

TIGRAN MARKOSYAN

COSTS OF PROCEEDINGS IN CIVIL PROCEDURE

(SCIENTIFIC AND PRACTICAL HANDBOOK)

Հանձնվել է տպագրություն 13.04.2020:
Չափսը 60x84 1/16:
Ծավալը՝ 4 տպ. մամուլ:

Արդարադատության ակադեմիայի հրատարակչություն
Ք. Երևան, 0054, Փիրումյանների փող. 9
www.justiceacademy.am